Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 12

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<08>> օգոստոսի 2024թ. ք. Երևան

2024 թվականի օգոստոսի 8-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էին հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը և հանձնաժողովի անդամ Խ. Սողոմոնյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում 2024 թվականի հուլիսի 9-ի թիվ 1542-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի շրջանակում «ԷՅ ԷՄ ԷՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊ ընկերությանը 2021 թվականի հուլիսի 26-ին տրամադրված տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00051 լիցենզիայի գործողությունը կասեցնելու հարցի քննարկում:

Քննարկվեց՝

«ԷՅ ԷՄ ԷՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ 2024 թվականի օգոստոսի 1-ի դիմումը՝ Ընկերության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00051 լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների կողմից լիցենզիայի պայմանների և պահանջների պահպանումն ապահովելու նպատակով ՔՏՀԱ տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կողմից իրականացվող մշտադիտարկումների արդյունքում պարզվել է, Ընկերությունը, որը լիցենզավորված է Երևան քաղաքի Արշակունյանց 119 հասցեում (գործունեության վայր) տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննություն իրականացնելու համար, իր գործունեությունը ծավալում է լիցենզիայով տրամադրված շինությանը կից հարակից շինության մեջ՝ խախտելով ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 690-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի պահանջը, այն է՝ լիցենզավորված անձինք տեխնիկական զննության անցկացման գործունեությունը իրականացնում են լիցենզիայում նշված գործունեության վայրում:

Տեսչական մարմինը ընկերությանը գրավոր տվել է 10-օրյա ժամկետ առկա խախտումը վերացնելու վերաբերյալ, սակայն վերոհիշյալ ժամանակահատվածում խախտումը չի վերացվել և Տեսչական մարմինը միջնորդություն է ներկայացրել Լիազոր մարմնին՝ քննարկման առարկա դարձնել Ընկերությանը տրամադրված լիցենզիայի գործողության կասեցման հարցը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում 2024 թվականի հուլիսի 9-ի թիվ 1542-Ա հրամանով հարուցվել է վարչական վարույթ:

2024 թվականի հուլիսի 31-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում վարչական վարույթի շրջանակում հրավիրված լսումների ժամանակ Ընկերության տնօրեն Արմեն Սայադյանը մեկնաբանեց, որ Ընկերության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00051 լիցենզիայի գործունեության վայրը սահմանված է Երևան քաղաքի Արշակունյանց 119 հասցեն, իսկ ներկայումս Կազմակերպությունը տեխնիկական զննության համար նախատեսված արատորոշման սարքավորումները տեղափոխել է իր գործունեության վայրի մոտ կառուցված այլ շինություն, որին դեռևս չի տրամադրվել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական:

Ա. Խաչատրյանը մեկնաբանեց, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե լիցենզավորված անձին գործունեության իրականացման լիցենզիա տալու համար օրենքով կամ լիցենզավորման կարգով գործունեության իրականացման վայրի նկատմամբ հատուկ պահանջներ են սահմանվել, ապա լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու վայրը կարող է փոփոխվել, կամ տվյալ լիցենզավորված անձն այդ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով նոր վայրում գործունեություն կարող է իրականացնել միայն գործունեության վայրի վերաբերյալ սահմանված հատուկ պահանջները բավարարող օրենքով կամ լիցենզավորված կարգով նախատեսված փաստաթղթերի ներկայացման դեպքում:Սույն պահանջների խախտմամբ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելը համարվում է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության իրականացում:

Ընկերության տնօրենը պարտավորվեց Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետի ավարտը ներկայացնել նոր տարածք՝ Ընկերության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00051 լիցենզիայի գործունեության իրականացման վայրի փոփոխություն իրականացնելու համար, կամ դիմել լիազոր մարմնին՝ Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին 9-րդ կետի համաձայն Ընկերությանը տրամադրված N ՏՄՏՋ 00051 լիցենզիայի գործունեությունը կասեցնելու համար՝ մինչև նոր գործունեության իրականացման վայրի վերաբերյալ համապատասխան փոստաթղթերի ներկայացնելը:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Կազմակերպության 2024 թվականի օգոստոսի 1-ի դիմումը՝ Ընկերության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00051 լիցենզիայի գործողությունը մինչև գործունեության իրականացման վայրի փոփոխություն իրականացնելը կասեցնելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի նիստին մասնակից անդամները ուսումնասիրեցին Ընկերության դիմումը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԷՅ ԷՄ ԷՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ընկերության կողմից ներկայացված՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00051 լիցենզիայի գործողությունը մինչև գործունեության իրականացման վայրի փոփոխություն իրականացնելը կասեցնելու մասին դիմումը ենթակա է բավարարման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան